ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԴԻՍՊԱՆՍԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք.Վանաձոր, Նժդեհի 57
հեռ. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЛОРИЙСКИЙ ОБЛАСТНОЙ ПСИХОНЕВРОЛОГИЧЕСКИЙ ДИСПАНСЕР
ГОСУДАРСТВЕННОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

РА г.Ванадзор ул.Нждеа 57
тел. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

«12» 09 2023 թ.

No 01/1078

ՀՀ ֆինանսների նախարար
Վահե Հովհաննիսյանին

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայտնում եմ Ձեզ, որ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ի և <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊԸ-ի միջև 2022թ.-ի դեկտեմբերի 30-ին կնքվել է <<ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-23/03>> ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման պայմանագիր: Սակայն վերոնշյալ ՍՊԸ-ը 2023թ. օգոստոսի 22-ին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացրել է, որ 2013թ օգոստոսի 22-ից դադարեցնում է իր կողմից իրականացվող տնտեսական գործունեությունը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի <<բ>> ենթակետը՝ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ը 28.08.2023թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը՝ ծանուցելով <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊԸ: Սույն փաստը միաժամանակ հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

2023թ. սեպտեմբերի 12-ին իմ կողմից կայացվել է պատճառաբանված որոշում, որը, ղեկավարվելով <<Գնումների մասին օրենքի>> 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ, ներկայացվում է լիազորված մարմին՝ <<ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊ ընկերությունը <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ>> ներառելու նպատակով:

Ստորև ներկայացվում է <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ԿԱՈՒՊԵՐՎՈՒԴ>> ՍՊ ընկերությունը ընդգրկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
<<ԿԱՌՈՒՊԵՐ ՎՈՒԴ>> ՍՊԸ	01043009	ք.Երևան, Նոր Նորք 0056, Գայի պողոտա,11/20		+		12.09.2023 «ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-23/03»

Կից ներկայացվում է <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ի կողմից 30.12.2022թ.-ին կնքված <<ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-23/03>> ծածկագրով սննդամթերքի պայմանագրի էլեկտրոնային տարբերակը, ինչպես նաև որոշում կայցնելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ներկայացված զեկուցագրի, Պայմանագրի և կից կնքված համաձայնագրի պատճենները և տնօրենի կողմից ընդունած որոշումը:.

<<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ի տնօրեն՝ **/Ա.Ա.Ղուլիջանյան/**